զուրկներին, ազատութիւն՝ ճնշուածներին. ու յանուն այդ սկզբունքների ոտքի հանել ուրիշների հետ եւ մի փոքրիկ ժողովուրդ, հայ ժողովուրդը — համակ յոյս, հաւատ ու աննենգ կորով — ապա նրան լքել իր արիւնարբու թշնամու կատաղութեանը — սա փաստ է, որ անցնում է հայկական շահերից եւ դառնում է համաշխարհային մորալի ու խղճի խնդիր:

Եւ այս է պատճառը, որ Հայաստա՛նը, այս վիրաւոր, արնաքամ, կողոպտուած, տըրորուած Հայաստանը մնում է սպառնալի ու զարգանդոտ:

Անհնարին է որեւէ անուն արտասանել առանց սարսուռի, եթէ դեռ հոգի կայ:

Լոյտ Ջորջի այն խօսքերը, թէ թիւրքը իրեն յանձնուած ազգերի «վատթար պահապան եղաւ», այսօր կարելի է դարձնել բոլոր Դաշնակիցների, բոլոր, բոլոր ազգերի դէմ: Նրանք ամէնքն էլ վատ, «չատ վատ պահապան եղան» դարերից ժառանգութիւն հասած քաղաքակրթական բարձր սկզբունքներին. եւ դաւեցին մարդկութեան իդէալին:

Ինչո՞ւ զարմանալ, որ այսօր յոգնած ու հիասթափուած ժողովուրդները նոր պահապաններ, նոր վարիչներ են փնտռում աշխարհն ու պատմութիւնը ղեկավարող նուիրական սկզբունքներին:

Հաւատն է մեռել դէպի քաղաքակիրթ մարդկութեան խղճմտանքը:

Տառապողներն ու ճնշուածները նոր եւ աւելի արդար, աւելի զգայուն, աւելի մաքուր խղճմտանքն են փնտռում:

Այստեղ է դաղտնիքը մեր օրերի այս անդադրում ու կրքոտ եռուզեռին, որ ոչինչ չի թողնում կայուն ու ապահով: Ամէնքը եւ ամէն ինչ դաղափարական թէ նիւթական աշխարհում՝ անապահով են ու մազից կախուած:

Ազգերի հասարակական կեանքն ընթանում է վտանգաւոր ցնցումներով. ոչ ոք վստահ է, թէ իր ընտրած ուղին վերջնական է:

Եւ ուղիները խաչաձեւում են իրար:

Պատմութեան մէջ յանցանքներ կան, որոնց արձագանգը յետագայ դարերի մէջ է դրնդում:

Դաշնակիցները կարծեցին, թէ ոչինչ բան է ուրանալ Հայաստանը:

Ցեղային վատթար եսասիրութիւնը, յարաճուն ընչաքաղցութիւնը աւելի հզօր եղաւ քան պարզ արդարութեան զգացումը:

Ի՞նչ է Հայաստանը. Առաջաւոր Ասիայի մի լեռնոտ անկիւնում կորած մի երկիր, ուր ապրում է մի բուռն ժողովուրդ՝ արնաքամ ու խոշտանգուած:

Ո՞վ կը լսի նրա բողոքի ձայնը:

Ո՞վ հաշիւ կը պահանջի նրա համար:

«Եկա՛յք, սպանցուք զարդարն»...

Եւ ուրացան Հայաստանը:

Հսկայ պետութիւններ, որոնց դրօշակին դիպուածով կամ յիմարօրէն նետուած մի քար կարող է մի նոր պատերազմի ու սրածութեան ազդանշան համարուել, չի հասկացան, ու Հայաստանին դաւելը մեծագոյն նախատինքն է իրենց դրօշակին, որի պատիւը սերտօրէն կապուած է իրենց երդումի ու իրենց պատուոյ խօսքի հետ:

Ամէն անգամ, որ որեւէ պետական մարդ այսուհետեւ արտասանի «ազգային դրօշակի պատիւ» խօսքերը, ամէն ոք իրաւունք ունի ճչալ՝ «ապա Հայաստա՞նը»...

Այս էր, որ մոռացուեց:

Եւ պատիժը չուշացաւ:

Հայաստանը լռեց:

Նա անզօր էր ու պարտասած:

Նա լռեց իր արցունքն ու ցասումը կուլ տալով. բայց մի գերագոյն ու անծանօթ արդարադատութիւն Հայաստանը լքող պետութիւնների ճամբին հանեց հարիւրաւոր ցեղեր: Մարօկկօից մինչեւ Եգիպտոս ու Սիւրիա. Հնդկաստանից մինչեւ Շանխայ ու Մոնգոլիա բոլոր ցեղերի եռուզեռն ու փոթորկումները կատարւում են յանուն Լօզանի դաշնագրի:

Մուստաֆա Քեմալ Ղազի — յաղթական է ոչ միայն թիւրքերի համար, այլ եւ Ասիայի ու Աֆրիկայի բոլոր խաժամուժների համար: Քեմալիզմը մի մօդել է, որի վրայ այդ ցեղերը չափում ու ձեւում են իրենց ազգային իդէալին հասնելու մեթոդները: Քեալիզմի ոգին է առաջնորդում այդ ըմբոստացած խուժանները. նա է զինում բազուկները պետութիւնների դէմ